ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

N 1388

ք. Երևան

«--------» ----------2024 թ.

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի
տնօրեն Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ քերևան, Կոմիտասի 36ա-22
ՀՎՀՀ՝ 00095651
էլ. հասցե՝ contracts@locator.am

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի միջև (այսուհետ՝ Կատարող) 25.03.2024 թվականին կնքվել է N «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-24/5» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**(...)»:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և Պայմանագրի 7.3 կետի համաձայն այն դեպքում, **երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման**

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է(..):

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով և Պայմանագրի 7.3 կետով՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-24/5» ծածկագրով Պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա.Ս. ԱԲԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Բաղդասարյան